

ԿԱՐԾԻՔ

Ժոու Շուհանի

«Դիցաբանական վիշապի կերպարը հին Չինաստանի և Հայաստանի արվեստում»

թեմայով

թեկնածուական ատենախոսության վերաբերյալ,

ներկայացված ԺԷ.00.03 – «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ,

դիզայն» մասնագիտությամբ

արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ժոու Շուհանի ատենախոսությունը նվիրված է հին Չինաստանի և Հայկական լեոնաշխարհի արվեստում վիշապի դիցաբանական և պատկերագրական կերպարի ուսումնասիրությանը: Հետազոտության նպատակն է հին Չինաստանի և Հայկական լեոնաշխարհի արվեստում առասպելական վիշապի պատկերագրության և խորհրդաբանության վերլուծությունը: Ատենախոսության թեման արդիական է, քանզի մինչ օրս բացակայում է թեմայի առումով կատարված արվեստագիտական համակողմանի հետազոտություն: Հարկ է նշել նաև, որ սույն ատենախոսությունը թեմայի առումով կատարված հրատարակությունների բացակայության պայմաններում ինքնուրույն և նորարար աշխատանք է:

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, յոթ գլուխներից և դրանցում ներառված թեմատիկ ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության առաջին գլուխը նվիրված է նախապատմական ժամանակաշրջանի պատկերամտածողության ձևավորման սկզբունքների քննությանն ու տեսությունների վերլուծությանը: Ատենախոսության երկրորդ գլխում կատարված է չինական նախնադարյան հավատալիքների և հուշարձաններում վիշապի պատկերագրական լուծումների համադրական ուսումնասիրություն: Հեղինակի կողմից արտացոլված են չինական հնագույն մշակութային ժամանակաշրջաններում վիշապի վերաբերյալ ձևավորված պատկերացումները: Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են Չինաստանի և Հայկական լեոնաշխարհի վաղ բրոնզեդարյան հնագիտական գտածոներում վիշապի կերպարի համեմատական քննությունն ու դիցաբանական առնչությունները, ուշադրություն է դարձված գրավոր աղբյուրներին և

առասպելաբանությանը: Ատենախոսության չորրորդ գլխում ներկայացված է Հայկական լեոնաշխարհի հնագույն պատկերագրական հուշարձանների գեղարվեստական հորինվածքներում նախնադարյան հավատալիքների արտացոլումը: Ատենախոսության վեցերորդ գլխում վերլուծության են ենթարկվում բրոնզեդարյան Չինաստանի և Հայկական լեոնաշխարհի մշակույթներում վիշապի դիցաբանական խորհրդապատկերները և հիմնական տիպաբանությունը: Ատենախոսության յոթերորդ գլխում ներկայացված են վաղ բրոնզեդարյան Չինաստանի և Հայկական լեոնաշխարհի միջև հավանական մշակութային առնչությունները, պատկերամտածողության նմանությունները: Ատենախոսության շրջանակում թեմայի ուսումնասիրությունը կատարված է համեմատական վերլուծությամբ, գրավոր աղբյուրների և հնագիտական գտածոների գեղարվեստական հորինվածքային լուծումների համադրմամբ: Մեծ ուշադրություն է հատկացված երկու մշակույթներում դիցաբանական և առասպելաբանական նյութի ուսումնասիրությանը: Ատենախոսության վերջում ներկայացված են ուսումնասիրության հիման վրա կատարված հեղինակի եզրահանգումները: Օգտագործված է թեմային առչվող բավարար գրականություն:

Հատկանշական է, որ հեղինակի կողմից ատենախոսության շրջանակում ներկայացված է բավական ընդգրկուն և բարեխղճորեն կատարված աշխատանք:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը, այդուհանդերձ ունենք որոշ ցանկություններ.

1. Ատենախոսության մեջ առավելապես քննության են ենթարկված բրոնզեդարյան հուշարձանները և անհրաժեշտ է, որ վերնագրում ևս հատկանշվեր ներառված ուսումնասիրության ժամանակագրությունը:
2. Աշխատանքն առավել շահեկան կլիներ, եթե ավելի շատ ուշադրություն հատկացվեր ոչ թե դիցաբանական, բանահյուսական և գրավոր այլ աղբյուրների ընդգրկուն նկարագրին, այլ գեղարվեստական հորինվածքների արվեստաբանական վերլուծություններին:
3. Հեղինակների անունները լավ կլիներ գրվեր միանման ձևաչափով. կամ անվան առաջին տառը, կետ և ազգանուն կամ անունն ամբողջությամբ: Իսկ ատենախոսության մեջ տարբեր ձևերով է նշված:
2. Ատենախոսության մեջ կան տեխնիկական վրիպակներ և լեզվաբանական

սխալներ (օրինակ՝ էջ 8, 14, 15, 18, 21, 23, 71, և այլն):

Վերոնշյալ դիտողությունները բնավ չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Ատենախոսությունը կարելի է համարել թեմայի առումով կատարված հաջողված աշխատանք:

Արդյունքում՝ գտնում եմ, որ Ժոու Շուհանի «Դիցարանական վիշապի կերպարը հին Չինաստանի և Հայաստանի արվեստում» թեմայով ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսության հեղինակը միանգամայն արժանի է ԺԷ. 00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գիտաշխատող,
արվեստագիտության թեկնածու՝

Գայանե ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի գիտաշխատող,
արվեստագիտության թեկնածու Գայանե Պողոսյանի ստորագրությունը վավերացնում եմ՝



ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի գիտաշխատող,
արվեստագիտության թեկնածու՝

Մարգարիտա ՔԱՄԱԼՅԱՆ